«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

№ 034
«24» մայիսի 2023թ.

ՀՀ Արարատի մարզ գ.Սիս Մասիսի 12
Հեռախոս՝ +374 93098350
Էլ. Փոստ՝ sis@schools.am

ՀՀ ԿԳՄՍ նախարարության գլխավոր
քարտուղար Հասմիկ Հակոբյանին

Հարգարժա՛ն պարոն Գ. Սաֆարյան

Հայտնում ենք Ձեզ, որ 2023թ.-ի մայիսի 31-ին <<Կրթություն >> շաբաթաթերթում հայտարարված է <<<< Արարատի մարզի Սիսի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում առաջացած թափուր տեղերի համար մրցույթ հետևյալ առարկաներից.

ինֆորմատիկա (7 դասաժամ),
երաժշտություն (3 դասաժամ),
հասարակագիտություն (6 դասաժամ)
տեխնոլոգիա (տղաների խումբ, 4 դասաժամ):

Կից ներկայացվում է մրցույթի հայտարարությունը:

Առդիր 1 էջ:

Դպրոցի տնօրենի ժ/ա՝ Բեգունց

Հայտարարություն

Մրցույթ՝ << ՀՀ Արարատի մարզի Սիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինֆորմատիկա (7 դասաժամ), տեխնոլոգիա (4 դասաժամ- տղաների խումբ), երաժշտություն (3 դասաժամ), հասարակագիտություն (6 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝
- դիմում (ձև 1),
- 1 լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են մայիսի 31-ից մինչև հունիսի 13-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 09:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և ոչ աշխատանքային այլ օրերից:

Մրցույթը տեղի կունենա 2023 թ. Հունիսի 20-ին ՝ ժամը 14:00-ին, ՀՀ Արարատի մարզի Սիսի միջնակարգ դպրոցում, հասցե՝ ՀՀ Արարատի մարզ, գյուղ Սիս, Մասիսի 12:

Տեղեկությունների համար զանգահարել 093 09 83 50 հեռախոսահամարով: